Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2/1
ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/4 ծածկագրով ԳՀ
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

21.03.2019թ.
ժամը՝15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)
Կոմիտեի նախագահի տեղակալ Ս. Աթանեսյան:

Անդամներ՝
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)
Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ Մ. Խաչատրյան,

Կոմիտեի իրավաբանական վարչության պայմանագրերի նախապատրաստման, կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ Մ. Եղիազարյան:

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)
Կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Էլարյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)
Կոմիտեի աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ Մ. Փարսադանյան:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց 15.03.2019թ. կասեցված նիստը շարունակելու մասին: «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում հրավիրված բանակցություններին «Սմարթլայն», «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» և «ՄԱՐՍ ՋԻ» ՍՊԸ-ները չէին ներկայացել առաջարկված գնի նվազեցման շուրջ հրավիրված բանակցություններին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշումամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ին 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 23-րդ չափաբաժիններում և «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին՝ 2-րդ, 14-րդ, 19-րդ, 22-րդ, 24-րդ ճափաբաժիններում:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) ենթակետը՝ «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/4» ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգը 1-ին, 12-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝

   ա) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի համար հրավերով սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

   բ) ծանուցել «Սմարթլայն» և «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը, 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Աթանեսյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝

Լ. Էլարյան .....

Մ. Խաչատրյան .....

Մ. Եղիազարյան .....

Քարտուղար՝ **Մ. Փարսադանյան** .....